

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 3-ին, շաբաթ.—Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը:

*
* *

Ապրիլի 4-ին, կիրակի.—Զ կիրակի քառասնորդական պահոց (Գալստեան).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզում է տ. Մասիս վրդ. Գալստյանը:

*
* *

Ապրիլի 5-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի տեսուչ տ. Շահե արքեպ. Աճեմյանը, որը մարտի 29—31 օրերին Մոսկվայում մասնակցել էր խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար փոխհարաբերությունների հաստատմանը նվիրված կրոնական գործիչների համաշխարհային կոնֆերանսի նախապատրաստական կոմիտեի ընդլայնված նիստին:

Ժողովից հետո տ. Շահե արքեպիսկոպոսը, Վրաստանի հայոց առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանի և Բաքվի հայոց առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի հրավերներով, Մայր Աթոռի միաբան տ. Անանիա վրդ. Արաբաջյանի ընկերակցությամբ այցելում է Թբիլիսիի և Բաքվի հայոց եկեղեցիներ:

Ապրիլի 6-ին տ. Շահե արքեպիսկոպոսը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, մեկնում է Երուսաղեմ:

*
* *

Ապրիլի 7-ին, չորեքշաբթի.—Աւետումն ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

*
* *

Ապրիլի 11-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Օրվա մեծ տոնի առիթով այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Այսօր զուարճացան տիեզերք գալստեամբ Աստուածորդւոյն յԵրուսաղէմ. և գոչէին հնչմամբ երգով օրհնեալ եկեալ անուամբ Տեառն» շարականի բնաբանով:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում ավանդական հանդիսությամբ կատարվում է Դոնբացեքի արարողությունը:

Արարողությանը ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր, ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում տեղի է ունենում միաբանության և մայրավանքի ողջ աշխատավորության ամենամյա հավաքը՝ նվիրված 1976 թվականին Մայր Աթոռում կատարվելիք աշխատանքների է՛լ ավելի կազմակերպվածությանը և արդյունավորությանը:

Այս սովորությունը հաստատվել է Վեհափառ Հայրապետի օրոք, երբ Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունն ու աշխատավորությունը տարին մեկ անգամ հավաքվում են «արտադրական խորհրդակցության»՝ հանրագումարի բերելու մեկ տարվա ընթացքում իրենց կատարած աշխատանքներում ձեռք բերված հաջողությունները և նոր եռանդով շարունակելու իրենց առաջ դրված աշխատանքային նոր առաջադրանքները:

Հավաքին նախագահում է Վեհափառ Հայրապետը: Մասնակցում են միաբանությունը, պաշտոնեությունը և մայրավանքի ողջ աշխատավորությունը, այր թե կին, ավելի քան 150 հոգի:

Հավաքը ներածական խոսքով բացում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Այնուհետև սրբազանը հրավիրում է «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի ավագ դասախոս պրն. Արթուն Հատիտյանին՝ խոսելու 1976 թվականին Մայր Աթոռում կատարվելիք հոգևոր, եկեղեցական, մշակութային, շինարարական-վերանորոգչական աշխատանքների է՛լ ավելի կազմակերպված, գիտակից և կարգապահ կատարման մասին:

Հարգելի բանախոսը շեշտում է մանավանդ այդ աշխատանքների կարևոր նշանակությունն ա՛յս տարի, երբ սեպտեմբերին միաբանությունը, պաշտոնեությունը և աշխատավորությունն իրենց նվիրյալ, կարգապահ աշխատանքով իրենց սրտագին մասնակցությունը պիտի բերեն Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակին նվիրված հանդիսություններին և արբալույս մեռոնի օրհնության տոնակատարություններին:

Հավաքի ավարտին Վեհափառ Հայրապետն Իր օրհնությանն ու գնահատանքին է արժանացնում Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության և ողջ աշխատավորության կատարած աթոռանվեր աշխատանքները՝ բոլոր բնագավառներում:

Ի գնահատություն այդ աշխատանքների, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է լուսանկարվել Վեհարանի այգում, խաչքարի առաջ, հավաքի հոգևորական և աշխարհական բոլոր մասնակիցների հետ:

*
* *

Ապրիլի 15-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի. Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ժամը 16-ին Մայր տաճարում կատարվում է Ոտնալվայի և ապա, ժամը 19.30-ին՝ Խավարման կարգը:

Վեհափառ Հայրապետը, «Փառք ի բարձունս» երգից հետո, հոգեշունչ քարոզ է խոսում Խավարման գիշերվա խորհրդի և Հիսուսի մատնության ու չարչարանքների հոգևոր նշանակության մասին:

*
* *

Ապրիլի 16-ին, ուրբաթ.—Աւագ ուրբաթ. Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Ժամը 11-ին Մայր տաճարում պաշտվում է «Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» կարգը:

Երեկոյան, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Մայր տաճարում կատարվում է Թաղման կարգը և ապա «Թափոր թաղմանն»:

*
* *

Ապրիլի 17-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ. Ծրագալոյց Զատկի.

Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում Ծրագալույցի պատարագ է մատուցում լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը: Ս. պատարագից առաջ հոգեվոր ճեմարանի ուսանողներն ընթերցում են Դանիելի գիրքը:

Ս. պատարագի ավարտին, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Զատկի նախատոնակը, որից հետո Նորին Սրբությունն առաջնորդվում է Վեհարան:

Ավելի ուշ մայրավանքի սեղանատանն օրհնվում է Մայր Աթոռի աղն ու հացը, և

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՈՂՋ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ԲԱԿՈՒՄ
(1976 Թ. ԱՊՐԻԼԻ 14)

միաբանությունը ճաշակում է Նավակատի-քի բարիքները:

*
* *

Ապրիլի 19-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Ապրիլի 21-ին, չորեքշաբթի.—Զատկական տոնակատարությունների կապակցությամբ (հին տոմարով) պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ հավատացյալներին միխիթարելու համար Մայր Աթոռից ներքին թեմեր մեկնեցին տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, ընկերակցությամբ պրն. Հայկ Ֆրունջյանի՝ Բաքու, տ. Մասիս վրդ. Գալստյանը՝ Ռոստով, տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը, ընկերակցությամբ Հակոբ սրկ. Խաչատրյանի՝ Թբիլիսի, Միսաք սրկ. Մարգարյանը, Ախալքալաք, Ռուբեն սրկ. Սաղոյանը՝ Ախալցխա:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Ապրիլի 25-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակէ).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել ֆրանսահայ մի խումբ ուխտավորների: Այնուհետև Նորին Սրբությունը միաբանության և ուխտավորների հետ թափորով առաջնորդվում է Մայր տաճար:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի» բնաբանով, և ողջունում ներկայությունը ֆրանսահայ ուխտավորների:

*
* *

Ապրիլի 26-ին, երկուշաբթի.—Այսօր, ժամը 13.30-ին, Մայր Աթոռ են այցելում Կուբայից ժամանած մի խումբ մկրտչական եկեղեցու ներկայացուցիչներ: Հյուրերը, Մայր տաճարն ու եկեղեցական արվեստից թանգարանը դիտելուց հետո, ցանկանում են այցելել Վեհափառ Հայրապետին:

Վեհարանում Նորին Սրբությունն ընդունում է կուբացի հարգարժան հյուրերին: Տեղի է ունենում մտերիմ զրույց: Իր ողջույնի խոսքում Հայոց Հայրապետն ասում է.

«Մենք չափազանց գոհ ենք, որ քրիստոնյա եղբայրներ հեռավոր Կուբայից այցելում են Մայր Աթոռ ս. Էջմիածին: Ամեն անգամ, երբ այսպիսի քրիստոնյա եղբայրներ, մանավանդ ղեկավար հոգևոր անձինք, այցելում են Մեզ, Մենք ոչ միայն ուրախանում ենք, այլև ավելի ոգևորվում և զորանում ենք հոգեպես՝ իբրև Քրիստոսի Ավետարանին ծառայող մարդիկ: Զգում ենք կենդանի համաքրիստոնեական եղբայրությունը մեր բոլորի:

Դուք այստեղ գտնվում եք հայկական քրիստոնեության պատմական կենտրոնում՝ ս. Էջմիածնում. երևի ձեզ հայտնի է արդեն, որ հայ ժողովուրդը քրիստոնեությունը ընդունեց Դ դարու սկզբին՝ 301 թվականին: Ահա մոտ 1700 տարիների ընթացքում ս. Էջմիածինը մնում է կենտրոնը հայ եկեղեցու, և որտեղ նստում է նաև նրա պետը՝ կաթողիկոսը: Ինչպես մեր հայ ժողովուրդն ու մայր հայրենիքը՝ Հայաստան, այնպես էլ Էջմիածինը շատ ծանր պատմական շրջաններ է ապրել անցյալում, նույնիսկ երբեմն կես չափով քանդված է եղել այս տաճարը, և բազում անգամներ մեր բոլոր եկեղեցիները այրված են եղել, քանդված, և ժողովուրդը՝ կոտորված: Սակայն այդ բոլոր դժբախտությունների ընթացքում հայ ժողովուրդը միշտ հավատարիմ է մնացել իր քրիստոնեական հավատքին: Կարելի է ասել իբրև պատմական ճշմարտություն, որ հայ ժողովուրդը հաճախ, հեռավոր անցյալում, իր մարմնի նահատակության գնով պաշտպանել է Քրիստոսի Ավետարանը:

Ատուծո ողորմությամբ, Մենք ահա, ավելի քան կես դարուց ի վեր, Սովետական Հայաստանի հանրապետության հիմնադրությամբ խաղաղ ու ապահով կյանք ենք ապրում, և մեր նոր կյանքի պայմաններում մեր եկեղեցին ազատորեն շարունակում է իր առաքելությունը՝ սերտ հարաբերություն պահպանելով քույր եկեղեցիների հետ»:

Կուբայի մկրտչական եկեղեցու ներկայացուցիչները, խորապես տպավորված Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքերից, լավագույն տպավորություններով հրաժեշտ են առնում Նորին Սրբությունից և Մայր Աթոռից: